

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

# 4

ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԳՐԱԴԱՐԱՆ

# 4

Ն. Ն. ՊԱԴՅԱՊՈԼՍԿԻ

## ՄԱՆԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵջ

---

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

(17x13)

ՕՐԿ

13<sup>4</sup> 30<sup>b</sup> 2017

ՄԱՅԻՍԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿ. ԳԼԽ. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարեն բոլոր յերկրների, միացե՛ք

№ 4 ՄԱՅԻՍԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿ. ԳԼԽ. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ № 4

Ն. Ն. ՊԱԴԵԱՊՈԼՍԿԻ

ՄԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ  
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵջ

Թարգմ. Սիմակ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ—1925 թ.

## ԱՌԱՋԱԲԱՆ

Յերեխաները մեր ապագան են: Ո՞վ չի համաձայնի դրան: Սակայն ամենքն ել զիտեն, թե վորքան ժամանակ աշխատանք, ինամք ու հոգս են պահանջում, մինչև վոր նրանք մեծանում և կյանքի մեջ մեր ողնականներն են դառնում: Իսկ զյուղացին, մանավանդ ամառը, յերբ արեածաղց մինչև արեամուտ ստիպված ե աշխատել, կարծես թե իսկի ժամանակ չունի մտածելու, թե յերեխաներն ինչ են անում կամ ինչ պիտի անեն: Այն ինչ ուրիշներց ավելի հենց զյուղական յերեխաներն են, վոր աշխատանքի միջոցին կարող են մեծերի ոգնականը հանդիսանալ: Բացի դրանից այդ աշխատանքը, յեթե շափից գորս չե ու լավ ե զրված, կրկնակի ոգակար ե. նախ յերեխաների առողջության համար, յերկրորդ հենց ընտանիքի համար, վոր առողջ ու պնդակազմ յերեխաներ կունենա, վորոնք իրենց աշխատանքով կողնեն մեծերին: Աւատի պետք ե զիտենալ, թե ինչպես պետք ե ոգտագործել մանկան աշխատանքը:

Անմտություն ե յերեխաներին ծանրաբեռնել աշխատանքով, քանի վոր նրանց մարմինը դեռ աճում ե, այսպես ասած, հյութեր ե հավաքում: Աճումը շարունակվում է մինչև 17 տ. հասակը, իսկ յերեխն ել ավելի յերկար, և մանկան մարմնի վրոշ մասերը զեռ ձևավորվում են:


Ողինակ՝ վոսկըները յերկար ժամանակ աճում են: Ֆառնը և խիստ յերկարատե աշխատանքը կարող ե կանգ-

№ 248.

Գրառեպվար № 3 թ.

Տիրաժ 3000.

Պետքարարի 2-րդ տպարան Յերեխանում



1-2443 912

նեցնել կամ անկանոն ուղղություն տալ վոսկըների աճմանը, յերեխային դարձնել կորաքամակ, կողքերը ծուռ կամ կուրծքը թույլ: Ինչքան շուտ մկնեն յերեխաները մասնակցել գյուղատնտեսական աշխատանքներին, այնքան ավելի փառ կարող ե անդրադառնալ ապագայում այդ աշխատանքը նրանց առողջության վրա: Յեթե ծնողները կամ դաստիարակները շուտ շտապին յերեխաներին աշխատանքի սովորեցնել կամ նրանց աշխատանքից ոգուտ ստանալ, ապա մանկան մարմինը կարող է միանգամայն այլանդակվել կամ անկանոն աճել և յերեխան ամբողջ կյանքում անպետք աշխատավոր կըլինի: Դժվար է յերեվակայել, թե ինչքան ինսաս ե բերում մարդկանց յերեխաներին վաղաժամ աշխատանքի մեջ քաշելը, իսկ իրեն յերեխային ինչքան վիշտ ու տանջանք ե պատճառում թե մանուկ հասակում և թե այն ժամանակ, յերբ նա կըմեծանա և կյանքը նրանից աշխատանք ու առողջություն կըպահանջի:

Սյդ պատճառով ակնհայտ ե, վոր ժամանակն ե մանկան աշխատանքը կազմակերպել ու իւելացի հիմունքների վրա զրել: Ժամանակն ե յերեխաներին այնպես դաստիարակել, վոր վարժեցնելով աշխատանքի ամրապնդենք նրանց առողջությունը և զրանով ոգուտ բերենք մարմնին ու մտքին:

Սույն գրքույկը հանդիսանում ե մի փորձ՝ բարելավելու մանկան աշխատանքը գյուղատնտեսության մեջ: Պետք ե հուսալ, վոր ասած ել յերեխաներին սիրողները մանկան աշխատանքը լավացնելու զործի մասին մտածել են և մտածում են: Հավանական ե, վոր շատ մանկավարժներ ու գյուղատնտեսներ, դաստիարակներ ու ծնողներ մտածել ե աշխատել են գյուղատնտեսության մեջ մանկան

աշխատանքի կանոնավոր կազմակերպման մասին: Նրանց բոլորին հեղինակը խնդրում է, վոր հայտնեն իրենց հասցեները և հայացքները գրքույկիս մտքերի մասին: Թող զբեն իրենց ուղղամները, հավելումները և ցանկությունները՝ բավանդակության եյության մասին: Միայն մանկան աշխատանքի կանոնավոր կազմակերպման և մեր հողագործ բնակչության առողջության ծաղկմանը համակրողների ընդհանուր աշխատանքը կարող է հասցնել այն բանին, վոր անջատ գիտողությունները կըմիանան, կըկաղմն մի լավ կերտված զիտություն, վորը վերջի ի վերջո մանկան աշխատանքի կազմակերպությունը գյուղատնտեսության մեջ իր խական բարձրության վրա կընի:

Հեղինակի հասցեն—Մոսկվա, Արբատ, Նիկոլյսկի ուղ. դօմ. № 21 կ. 4 հ. հ. Պոդյոլյսկու,

Հեղինակ:

## ՄԱՆԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Գյուղատնտեսության մեջ մանկան աշխատանքն ոգտագործվում է ամեն տեղ:

Բոլոր յերկրներում և բոլոր ժողովուրդների մեջ յերեխաներն աշխատել են ու աշխատում են գյուղատնտեսության մեջ:

Մեր Խորհ. Միության մեջ, վոր յերկրագործական մի յերկիր և, գյուղատնտեսության մեջ մանկան ոգտագործումն այնքան տարածված է և պարտադիր, վոր նույն իսկ գյուղական դպրոցների ծրագիրները հարմարեցրած են այնպես, վոր ամառային աշխատանքների ժամանակ՝ քարնան սկզբից մինչև աշուն—յերեխաներն աղատ լինեն դպրոցական պարագմունքներից:

Դաշտերի մշակման, անասնապահության, այգեգործության և մանավանդ բանջարաբուծության գործում մանկան աշխատանքը գործադրվում է ընդարձակ չափով և մեծ ոգուտ և բերում:

Համաշխարհային և քաղաքացիական կոիմսերի տարիները համարյա ամեն տեղ ստիպեցին յերեխաներին ծանր աշխատանքի ձեռնարկել. նրանցից շատերի առաջ կանգնեց այն հարցը, վոր իրենք պետք ե կերակրեն իրենց և ստիպված յեղան ամեն տեսակ աշխատանք կատարել: Յերեխաներն աշխատում եյին և

իրենց տներում, ուր տան հոգսը կանանց վրա յեր ընկել (հասակավոր տղամարդիկ կամ պատերազմ ելին զնացել կամ աշխատանքի գնացել ու մեռել) աշխատում ելին և մանկական հիմնարկներում:

Այդ տարիների ծանր փորձը, անտեսության ծանրությունը յերեխաների վրա բարձելու փորձը, թերկուղ անտեսության վոր և ճյուղում, որինակ՝ բանջարաբուծության, մանր անասնապահության կամ մեղվաբուծության մեջ և այլն, ցույց տվեց, փոր մանուկները կարող են անտեսություն վարել, բայց զրա համար հարկավոր ե խելացի կերպով առաջնորդել նրանց և կազմակերպել մանկական աշխատանքը:

Իսկ ինչպես կազմակերպել այդ աշխատանքը, վոր դրանից ոգտվի վոչ միայն անտեսությունը, այլ և ինքը մանուկը:

Ահա հարցեր, վորոնց պետք ե վորոշ օրատասխան տալ:

Մանկական աշխատանքը գյուղատնտեսության մեջ կանոնավորելու համար պետք ե նկատի առնել հետեւյալը:

1. Զի կարելի յերեխաներին վտանգավոր աշխատանքի զնել այլ պետք ե նրանց վնասակար աշխատանքերից հեռացնել:

2. Մանկական աշխատանքի տեղությունը գյուղատնտեսության մեջ պետք ե միակերպ չլինի, այլ համապատասխան յերեխայի տարիքին, ուժերին և ունակություններին:

3. Աշխատանքի ծանրությունը կամ բեռը և պետք ե համապատասխանի յերեխաների ուժերին:

4. Մանկական աշխատանքի գործիքները (բահ,

ցնցուղ և այլն) պետք ե հարմարեցրած լինեն մանուկների ուժին և հասակին:

5. Գործի հաջող ընթացքի համար պետք ե յերեխաների աշխատանքը խաղի նմանվի և վոչ թե պատժի:

### 1.

Գյուղատնտեսության մեջ վնասակար աշխատանքները շատ քիչ են: Զի վոր բոլոր յերկրներում ել գյուղական բնակչությունը սովորաբար ամենաառողջն ու տոկունն ե լինում:

Այնուամենայնիվ գյուղատնտեսական աշխատանքներից մի քանիսը յերեխաների համար անհամապատասխան պետք ե համարել: Դրանք, իհարկե, մեծերի համար ել են վնասակար, բայց յերեխաների համար ուղղակի վտանգավոր կարող են լինել:

Այսպիսի աշխատանքների շարքին են պատկանում ամենից առաջ բոլոր փոշոտ աշխատանքները: Քամելը, կալսկը, մեքենաների վրա աշխատելը, բուրդ ծեծելը, շատ չոր հողը ցաքանելը, փոշոտ արոտաեղերում անասուններ, մանավանդ վոշխար արածացնելը վնասակար ե յերեխաների համար: Փոշուց յերեխաները անհամեմատ ավելի յեն տուժում քան մեծերը, վորովհետև նախ նրանք գեռ չեն պնդացել և շնչառության գործարանները՝ թռքերը փոշով կեղտոտվելը կարող ե թռքախտ առաջ բերել, յերկրորդ, վորովհետև յերեխաները չեն գիտակցում, թե պետք ե պաշտպանվել փոշուց, ժամանակին աչքերը չեն փակում կամ քթով չեն սկսում շնչել, կամ մի բոպե շունչները պահում, յերբ ավելի վնաս ե շնչելը, քան շնչելը:

Յերեխաների համար վնասակար ե այն աշխատանքը, վոր միակողմանի ջանքեր ե պահանջում, որինակ՝ մի ձեռքով փայտ կտրելը, մի ձեռքով կամ մի ուսով ծանրություն կրելը և այլն։ Այդպիսի աշխատանքներից կարող ե վուկորի աճումը կանգ առնել կամ մանկան մարմինը այլանդակվել։

Վնասակար պետք ե համարել ե այն աշխատանքները, վորոնց ժամանակ յերեխայի մարմինը անհավասար կերպով կամ տաքանում կամ սառում ե, կամ մեկ տաքանում, մեկ սառչում ե։ Որինակ՝ յերեխաներին չպետք ե խուրձ չորացնելու աշխատանքի դնել կամ տորֆ կտրելու ուղարկել։ (Խուրձ չորացնելիս տաք վառարանի մոտից ստիպված են աշնան քամուն վառելիքի գնալ, իսկ տորֆ կտրելիս մի քանի ժամ շառնակ պետք ե սառը ջլի մեջ մնան\*):

Այսպիսի աշխատանքների ժամանակ յերեխաները կարող են մըսել, սաստիկ հիվանդանալ և մեռնել կամ այնպիսի հիվանդություն ստանալ ինչպես վուկրացափ ե, վորով կտանջվեն իրենց ամբողջ կյանքում։

Զի կարելի յերեխաներին այնպիսի աշխատանքի դնել, վորը լարված ուշադրություն ե պահանջում, որինակ՝ հնաձելու մեքենա բանեցնելը, յերբ միաժամանակ պետք ե և ձիերը քշել և շարժման հարկավոր արագությունը պահպանել և գետնի մակերեսութը դիտել, վոր մեքենան կոշտերին չդիպչի և մեքենայի ձայնով հետևել աշխատանքի կանոնավորությանը։ Այդպիսի բարդ աշխատանքից յերեխան շատ ավելի շուտ կհոգնի, քան հասակավորը։ Նա կամ կտանջվի այդպիսի աշ-

\*.) Այս յերկու տեսակ աշխատանքներն ել միը յերկում շկան։  
Ե. Թ.

խատանքից կամ շուտ հոգնելով սիսալներ կանի ու կփշացնի մեքենան կամ ինքը կըսկնի դանակի ու անիվների տակ։

Վերջապես, յերեխաներին չի կարելի հանձնաբարել այնպիսի աշխատանք, վոր պահանջում ե դաժան վերաբերունք անսառուների նկատմամբ, որինակ՝ չի կարելի հանձնաբարել, վորպեսզի ընտանի կենդանիներին մորթելիս ոգնեն կամ ուժից վեր աշխատանքի ժամանակ կենդանիներին ծեծեն և այլն։

Այն, ինչ վոր հասակավորներն անհրաժեշտությունից ստիպված, հակառակ իրենց ցանկության են անում, յերեխայի վրա կարող ե այնպիս աղղել, վոր նա հակամետ զանա իզուր տեղը կենդանիներին տանջել կամ չափից դուրս խղճահարվող լինել։

Այսպիսով, յերեխաների համար աշխատանք ընտրելիս վոչ միայն նկատի պետք ե առնել այն, թե կարող ե յերեխան մարմուվ, ֆիզիքապես հաղթահարել այդ աշխատանքին, այլ և այն, թե առանց վնասվելու հոգեպիս կարող ե հազթահարել դրան։

Գյուղատնտեսության մեջ վտանգավոր աշխատանքները նույնպես քիչ են՝ կալսելու մեքենային խուրձ տալը, մեխանիկական սողոցին փայտ տալը, մեքենայով հնձելը, ծառ կտրելը և մի քանի ուրիշը։ Վտանգավոր ե և չար կենդանիներին հսկելը-որինակ, ծեր ցուլի պահելը կամ շոգ ժամանակ սոված մեղուներին նայելը, վորոնք կարող են խայթելով սպանել։ Յերեխաների համար վըտանգավոր պետք ե համարել նաև շարժիչներին և տրակտորներին հետևելը և նման այլ աշխատանքները։

Իհարկե, յերեխաներին այդպիսի աշխատանք-

ների չպետք ե դնել—և հազիվ թե մեկը այդպիսի բան անի, քանի վոր յերեխաներին վտանգավոր գործ հանձնարարելը վտանգավոր ե թե նրանց և թե մեքենաների համար: Յեթի յերեխան ցանկություն ունի աշխատելու վտանգավոր տեղերում, պետք ե հետ պահել նրան, աշխատել մի ուրիշ բանով զրադեցնելը վորպեսզի անզգույշ շարժման հետեանքով մահացու վերք կամ արատ չտոտնա, վորը կմնա ամրող կյանքում: Ամեն մի ծնող կամ դաստիարակ, ճանաչելով իր յերեխային, կարող ե խսկույն վորոշել, թե ինչ աշխատանք վտանգավոր ե նրա համար և նրան այդ աշխատանքին չդնել: Ուստի և հարկ չկա մանրամասն թվելու բոլոր վտանգավոր աշխատանքները:

2.

Ավելի կարեվոր ե մանրամասն կանգ առնել այն հարցի վրա, թե, որինակ, քանի ժամ կարող են աշխատել յերեխաները: Զափազանց յերկարատև աշխատանքից առաջացած հոգնածության վտանգավորությունը այնքան ել նկատելի չե, այն ինչ յերեխայի աշխատանքի տեղողության սխալ վորոշումը կամ աշխատանքով ծանրաբեռնելը սովորաբար ֆլաստկար ու վտանգավոր հետեանքներ ե ունենում:

Աշխատանքով ծանրաբեռնելն ամենից առաջ անզրագանում ե յերեխայի մարմնական առողջության վրա: Սաստիկ հոգնած յերեխաները դադարում են աճել, ախորժակ չեն ունենում, քունները չի տանում, դանդաղաշարժ են դառնում, նվազում են, հաճախ հիգանդանում: Նրանց մատները այլանդակվում են, մեջքը կորանում, կողքը ծովում, կուրծքը ներս ընկնում,

շնչառության կանոնավորությունը խախտվում: Տուժում ե և նրանց միտքը—ուժից վեր աշխատանքից յերեխաները բթանում են, անհասկացող դառնում, վատ սովորում, ծույլերի տպավորություն թողնում:

Յերեխաներին աշխատանքով ծանրաբեռնելը մի ուրիշ վտանգ ել ունի. խիստ հոգնած յերեխաներն սկսում են աշխատանքին նայել իբրև պատժի: Աշխատում են խուսափել նրանից, աշխատանքը գցում են ուրիշների, հաճախ իրենցից ավելի թույլ ու անպաշտպան ընկերների վրա: Կյանքի ու աշխատանքի նկատմամբ՝ յերեխաների ուրախությունն անհետանում ե և վոչինչ չանելու ու ձրիակերության ձգտումն ե առաջ գալիս:

Այդ բանից խուսափելու համար պետք ե ճշտորեն վորոշել աշխատանքի այն քանակը, վոր պետք ե ալրվի ամեն մի յերեխայի: Աշխատանքը պետք ե հարմարացնել նրանց տարիքին, հասակին, ուժին և ընդհանուր գարգացմանը:

Այսպես, մինչև 8 տարեկան յերեխաներին չպետք ե վորոշ ժամանակով սահմանված աշխատանք տալ: Մինչև այդ տարիքը յերեխաներն իրենց խաղերի մեջոցին հաճախ պատկերացնում են մեծերի աշխատանքը, բայց դա չի նշանակում, թե արդեն կարելի յենրանց իրանց կամքին հակառակ այդ աշխատանքին լծել: 8, 9 տարեկան յերեխաներին կարելի յե միայն փոքրիկ, սահմանափակ ժամանակում կատարելի աշխատանք տալ: Այդ աշխատանքներն այնպես պիտի լինեն: Վոր կարելի լինի յերեխայի ցանկության համաձայն վորոշ ժամանակով ընդհատել, առանց մեծ վնաս բերելու

աշխատանքին: Այդ հասակում յերեխաներին կարելի յե հանձնարարել թուչուններին և հանգիստ անսպուն-ներին հսկելը: Այդպիսի աշխատանք պետք է տալ վոչ ավելի քան կես ժամով՝ որինակ՝ մեծերի ճաշելու միջոցին: Կարելի յե յերեխաներին ուղարկել այս կամ այն իրը (վոչ ծանր) տանեն—ճագարների համար խոռ քաղեն, ձենորսության համար մժեղներ կամ ծղրիտներ բռնեն: Կարելի յե հանձնարարել ծառից թափված պըտուղները հավաքեն և այլն: Այդ աշխատանքներն ամեն անգամ կես ժամից ավելի չպիտի տեսն: Իսկ յերեխայի աշխատանքը ամբողջ որը պետք է տեր վոչ ավելի, քան մեկուկես ժամ:

Միենույն ժամանակ յերեխաներին պետք է հիշեցնել ինչպես աշխատանքի սկզբի մոտենալը, այնպիս ել նրա վախճանին մոտենալը: Առանց հիշեցնելու, յերեխաները կարող են ժամանակին չսկսել աշխատանքը կամ աշխատանքով տարգելով խիստ հոգնել:

10, 11 տարեկան յերեխաները կարող են ավելի բարդ աշխատանքներ կատարել, վորոնք արդեն վորոշ հմտություն են պահանջում:

Այսպես, հողի մշտկման ժամանակ նրանց կարելի յե հանձնարարել մարդկերի յերկրորդ անգամ բահելը, թորսելը, փողխելը, բուզը տալը: Սակայն այս բոլոր աշխատանքները կարելի յե հանձնարարել յերեխաներին միայն այն գեղքում, յեթե նրանց ուժերին համապատասխան գործիքներ կան: Այս տարիքի յերեխաներին կարելի յե հանձնարարել նաև բանջարանոցում ձեռքով սերմեր տնկելը և բույսերին հոգ տանելը, որինակ՝ ջոկելը, տնկելը, քաղհանելը, հանելը և այլն. բայց վորովհետեւ այդ աշխատանքները պա-

հանջում են մարմնի յերկարատև ծոված դրություն, ապա այդ աշխատանքները պետք են հերթով փոխարինել այնպիսի աշխատանքներով, վոր յերեխաները կարողանան ուղղվել վաղվել, ձեռքերը շարժել, աղաղակել: Դա անհրաժեշտ է յերեխային նրա համար, վորպեսզի մարմնի հոգնած անդամները ձգվեն, և վորքան կարելի յե շատ որ մտնի թոքերը, արյունը մաքրվի:

Այդ հասակում յերեխաների այնպիսի աշխատանքը, վոր մարմնի կորացած վիճակ և պահանջում, ավելի լավ են հերթով փոխարինել խաղով. քսան-յերեսուն ըոսե ա խատանք, քսան ըոսե խաղով: Այս պիտով ազատ կերպով կարելի յե յերեխաներին աշխատանքի դնել որական յերկու ժամ: Այդ գեղքում նրանք ուշագիր և սիրալիր վերաբերմունք կունենան գեղի աշխատանքը:

Խաղի փոխարեն մի աշխատանք կարելի յե փոխարինել այնպիսի աշխատանքով, վոր նման լինի խաղի, որինակ, ծառը բարձրանալ, պտուղներ թափ տալ, ձնձղուկներին մրցի այգիներից քշել, տովակում լիճ կապել և այլն:

Դաշտային աշխատանքներից 11 տարեկան յերեխաներին կարելի յե թույլ տալ գուցե միայն փողխով խոռ հավաքելը: Այս աշխատանքն ել կարելի յե կատարել ամեն 20 ըոսեյից հետո ընդհատումներ անելով: Ըստամին պետք են հետեւ, վոր յերեխաները շարունակ մի կողմի վրա չփողխեն, այլ ձեռքները փոխեն, մեկ ձախու առաջ բռնի, մեկ աջը: Դա հարկավոր և հավասարաչափ հոգնելու համար և նրա, վոր միտամանակ զարգանա մարմնի թե աջ և թե ձախ

մասը: Մի կողմի վրա աշխատելով զարգանում և պնդանում ե միայն աշխատող կողմը և յերեխան դառնում ե կամ աջլիկ կամ ձախլիկ, իսկ դա և վասակար ե և անձեռնուու: Մարդուս յերկու ձեռքն ել կարող են աշխատել միակերպ. դրա համար հարկավոր ե յերկուուն ել հավասարապես զարգացնել: Թէ վորքան այդ կարեվոր ե, կարող ե ըմբռնել ամեն վոք, յեթե մտածի, վոր յերը մեկի աջ ձեռքը վիրավորվում ե, սովոր չինելու դեպքում ձախող գդալը բերանը տանել չի կարողանում:

12, 13 տարեկան հասակում յերեխաներին կարելի յե հանձնարարել նույն աշխատանքները, բայց արդեն ավելի յերկար ժամանակով:

Աշխատանքի տեսողությունը մի անգամից կարելի յե դարձնել  $\frac{1}{2}$  ժամ, իսկ հանգիստը կրծատել մինչև 15 րոպե: Բանջարանոցային աշխատանքներից կարելի յե հանձնարարել ամեն ինչ, միայն այնպիսի աշխատանքներ, ինչպիսիք են՝ գետինը փորելը, ջրելը, ծանրություններ տեղափոխելը, պետք ե կատարվին հարմար գործիքներով, թեթև ցնցուղներով և հատուկ պատգարակներով (ԽՕԸԼՔԻ): Դաշտային աշխատանքներից յերեխաներին կարելի յե հանձնարարել գութան և արոր քշելը (յեթե հերկը փոշոտ չե), խոտ փոցիսելը և նույնիսկ զերանդի քաշելը: Սակայն գերանդի քաշել կարելի յե միայն այն պայմանով, վոր յերեխաներն աշխատեն փոքրիկ գերանդիներով, բացի դրանից պետք ե հսկել, վոր նրանք միմյանց փոտք չկտրեն, պետք ե հետեւել, վոր հնձվորները կանոնավոր դասավուլին, քանի վոր գերանդի քաշելը դրավիչ աշխատանք ե, ապա պետք ե հետեւել, վոր յերեխաները չտաքանան:

Գերանդի քաշելը մեծ լարումն ե պահանջում և նրանով կարելի յե զբաղվել որական մի ժամից վոչ ավելի, ամեն մի 5-10 րոպեյից հետո զաղար առնելով:

12 տարեկանից յերեխաների մեջ սեր ե զարթուում գետի շինարարությունը Յեթե նրանց չի հաջողվում վորե և բան շինել, ապա նրանց մեջ սկսում ե ավերիչ հակումներ առաջ գալ: Յերեխաները կոտրառում են ցանկապատերը, ջարդում են ապակիները, հարձակումներ են գործում ուրիշների բանջարանոցների ու այգիների վրա և այլն:

Դրանից խուսափելու համար պետք ե յերեխաներին հնարավորություն տալ խելացի կերպով գործազրելու իրենց ստեղծագործական ուժերը: Ուստի ոգտակար ե յերեխաներին փոքրիկ շինարարական աշխատանքների հրավիրել: Պետք ե փոքրիկ, 1-2 ժամում կատարվելիք պատվեր տալ անպայման ինքնուրույն կերպով անելու համար: Մեծերի հետ միասին աշխատելիս յերեխաներին վիճակվում ե աշխատանքի ամենահետաքրքիր մասը, ինչպես գործիքներ ու նյութեր տալ, մի բան բռնել և այլն:

Այն ինչ յերեխաները սիրում են, վոր իրենք մի բան շինեն և տեսնեն իրենց աշխատանքի արդյունքը: Մի վորե և գուռ շինելը ցանկապատ նորոգել, շան կամ սարյակի բռն շինելք բանջարանոցում ամառվարտաքնոց շինել, գեալք ջրի գնալու կամուրջ կամ սանդուխք շինել: Աչա այսպիսի աշխատանքները յերեխաների ուժերին և համապատասխան են և հետաքրքիր:

Յերեխաներին անտառի աշխատանք ևս կարելի յե հանձնարարել. որինակ մասը թափուկներ հավաքելը

փայտ սղոցել և այլն: Ինչպես այս, նույնպես և մանկական մյուս աշխատանքները պետք ե կատարվեն թիթե գործիքներով և մեծերի հսկողությամբ, բայց կարելի յե ինքնուրույն աշխատանք տալ. — $\frac{1}{4}$  դես. տեղմաքրել կամ  $\frac{1}{2}$  սաժ. փայտ սղոցել:

Բանվորական ուժի տեսակետից 14—15 տարեկան յերեխաներին կարելի յե համարել  $\frac{1}{4}$  բանվոր, իսկ բանվորական որվա տեսողության տեսակետից  $\frac{1}{2}$  բանվոր: Բացի վտանգավոր և վասակար աշխատանքներից սրանց կարելի յե ոգտագործել զյուղատնտեսական ամեն տեսակի աշխատանքի համար: Որպական աշխատանքի ընդհանուր տեսողությունը նրանց համար կարող է լինել 4 ժամ, սակայն յերեխաներն այդ 4 ժամը չպիտի անընդհատ աշխատեն, այլ 2 նվազ. — 2 ժամը ճաշից առաջ, 2 ժամը — ճաշելուց և լավ հանգստանալուց հետո: Բացի զրանից ամեն մի  $\frac{3}{4}$  ժամ աշխատանքից հետո 15 րոպե ընդմիջում պիտի արվի:

Անշափահաների աշխատանքն ամենից լավ ընթանում ե այն դեպքում, յերբ նրանք բանվորական որվա ընթացքում զբաղվում են վոչ թե մի, այլ մի քանի գործով: Որինակ՝ ոգտակար և հողը փորելուց հետո սերմեր տնկել, խոտը հարելուց հետո փոցխել կամ խուրձ տալ. — մանգաղով հնձելուց հետո խոտը բարձել և այլն:

Աշխատանքը պետք ե փոխել այնպես, վոր յեթե մի աշխատանքի ժամանակ յերեխան սաստիկ կոսցել եր, մյուսի ժամանակ կարողանա լավ ուղղվել, յեթե մեկի ժամանակ շարունակ անշարժ եր, մյուսի ժամանակ կարողանա վազվակել, յեթե մեկ՝ աշխատանք ձեռքերով եր անում, մյուսի ժամանակ շատ քայլի:

Աշխատանքի այսպիսի փոփոխությունից յերեխաների գործը լավ և ուրախ ե առաջ գնում ու ոգտակար և լինում վոչ միայն գործին, այլև յերեխաներին:

## 3.

Յերեխային ուժից վեր աշխատանքով չհոգնեցնելու համար պետք ե նկատի առնել և այն պայմանները, վորոնց մեջ նա աշխատում ե. որինակ, մարգերի քաղհանելը կարելի յե հեշտ աշխատանք համարել, խոտի սայլ բարձելը դժվար: Առաջին դեպքում աշխատողը բացի փոքրիկ բրիչեց ուրիշ բարձրացնում, յերկրորդ դեպքում յեղանով խոտ և բարձրացնում, վոր ամեն անգամ կարող է լինել  $\frac{1}{2}$  և նույն խոկ 1 փութի:

Բայց աշխատանքի լարվածությունն ու դժվարությունը միայն բարձրացրած առարկայի ծանրությունից ու շարժումների արագությունից չի կախված: Դա կախված ե նաև աշխատանքին զուգընթաց այլ պայմաններից:

Այսպես, փայտոի մեջ փոքրիկ մեխեր խփելը կամ բույերը ցցերից կապելը դժվար բան չե, բայց նույն մեխերը առաստաղին խփելը կամ խաղողի վորթը տաղափարի տանիքին կապելը շատ դժվար ե:

Թեթե բան բարձրացնելու համար մի քանի անգամ կռանալը վոչ միայն դժվար չե, այլև դուրեկան ե և ոգտակար, բայց յերկար ժամանակ կռացած աշխատելը, որինակ՝ փորելը, թորիսելը, ձեռքով բռւկը տալը, մանգաղով հնձելը, յերեխաների համար և դժվար և վտանգավոր: Այստեղից պարզ ե, վոր աշ-

խատանքի ծանրությունը կախված է նաև նրանից՝ հարմար թե անհարմար ե աշխատելը; Եթև մի որինակ՝ ձիավարելը դժվար չե և յերեխաներին միտյն բավականություն ե պատճառում, բայց հնձեռու մեքենային լծած ձիերին ղեկավարելը և ծանր է և հոգնեցուցիչ:

Ուրեմն, աշխատանքի ծանրությունը վոչ միայն նրանից ե կախված, թե ինչ են անում; այլ և նրանից, թե ինչպես, ինչով են աշխատանքն անում և ինչով ե այն զուգորդված:

Յերեխաների համար աշխատանքն ընդհատելու և նրա ծանրությունը գնահատելիս պետք ե նկատի ունենալ աշխատանքի բոլոր պայմանները:

Այդ ժամանակ բավական չե ղեկավարվել միայն յերեխաների տարիքով, պետք ե հաշվի առնել ամեն մի յերեխայի ուժն ու ընդունակությունը: Յերեմն և տարիքով մեծ և մարմառով իրը թե պնդակազմ յերեխան կարող ե մտքով թույլ լինել և ուժից վեր աշխատանքը կհաղթի նրան փոքրահասակի նման:

Աշխատանքը յերեխաների մեջ բաժանելիս չպետք ե ջոկել տղաներին աղջիկներից: Մինչև այժմ գործադրվող այդ բաժանումը հաճախ հանգում եր այն բանին, վոր տղաներին արգում եր ըստ յերկույթին ծանր, բայց իրոք ավելի ոգտակար աշխատանք, իսկ աղջիկներին իրը թե հեշտ, բայց դրա փոխարեն վընասակար աշխատանք: Սուլորաբար ձեռքով սերմ տընկելը, թորխելը, քաղհանելը և նման գործերը հանձնարարում են անել միայն աղջիկներին: Հողը փորելը, պատգարակով կամ սայլակներով կրելը, ճյուղեր կըտրելը, ծառ թափ տալը, խոտ հարելը փատհում են միայն տղաներին: Առաջին տեսակի աշխատանքները

ձանձրալի յեն, քիչ շարժում են պահանջում և ստիպում են մարմինը ծուծ պահել, սեղմում են կուրծքը, խանգարում են կանոնավոր շնչառությունը, հետեւպես արյան լավ մաքրվելուն, աշխատողին կուզ են դարձնում և զրկում ձկունությունից:

Այս եր աղջիկների վիճակը—այսպես կոչված «հեշտ» աշխատանքի արդյունքը:

Տղաների աշխատանքը, վոր ստիպում եր նրանց կամ կունալ կամ ուղղվել—պառույտ գալ ամեն կողմ, ձեռքերը թափահարելցա րգացնել աչքի արագությունն ու անվերապությունը, ձկունությունն ու շարժունությունը—բազմազան եր և խաղի նման, այդ տեսակ աշխատանքներ կատարելով տղաներն աղջիկներից ավելի եյին զարգանում, թեև այդ աշխատանքները «ծանր» եյին համարվում: Աշխատանքի այդպիսի բաժանումն աղջիկների ու տղաների միջև, իհարկե, անմիտ բան ե, վասակար և ու անարգարացի աղջիկների նկատմամբ:

Վորպեսզի աղջիկները կարող լինին իրենց տարիքին համապատասխան ամեն մի աշխատանք կատարել պետք ե կանխատեսել միայն, վոր նրանք նույն տարիքի տղաներից կարող են մի քիչ թույլ լինել: Ուստի աղջիկներին չձանրաբենելու համար պետք ե նրանց ու տղաների աշխատանքները միացնել բայց վոչ ըստ տարիքի, այլ ըստ ուժերի և ունակությունների:

Վոր գյուղատնտեսական ամեն տեսակ աշխատանք կանայք շատ լավ կարող են հասկանալ ու կատարել, այդ նրանք ապացուցեցին պատերազմի ծանր տարիներին, յերբ տղամարդիկ զորակոչի եյին յենթարկված և զյուղական ամբողջ տնտեսությունը ըն-

կած եր նրանց ուսերին: Նրանցից շատերը չնայելով վոր միանգամայն անպատճաստ եյին (չե՛ վոր մինչև պատերազմը միայն «կնկա» գործ եյին անում, տղամարդու աշխատանքը «կնկա ինելքի բան չեր» համարվում), հիանալի կերպով վարում եյին իրենց անտեսությունը: Կային և այնպիսիները, վոր իրենց աընտեսությունը ավելի լավացրին:

4.

Մանկական աշխատանքի հաջողության համար ահագին նշանակություն ունին այն գործիքները, վորոնցով նա աշխատում եւ:

Սովորաբար գործիքներն այնպես են շինում, վոր մի կողմից հարմարեցրած լինեն տվյալ աշխատանքը լավ անելուն, մյուս կողմից՝ համապատասխանեն աշխատողի ուժերին:

Վերցնենք սովորական յերկաթե բահը, վոր գործ են ածում հողը փորելու և փշելու համար: Նրա յերկարությունը լինում է 6 վերշ. լայնությունը  $4\frac{1}{2}$  վ.։ Դա ծիշտ այնպիսի չափ ե, վոր պետք ե՝ հողի մեջ բանի հարկավոր չափով մտնելու և նրա վրա 22-25 բանի հարկավոր չափով մտնելու համար: Բահը գորքան բարակ լինի, այնքան լավ, միայն թե չկոտրվի: Բահի ավելորդ հաստությունը միայն ծանրացնում է գործիքը—գործին ոգուտ չի բերում ու աշխատողը ամեն անգամ բարձրացնելիս ու հողը շպրտելիս ստիպված է բարձրացնել ավելորդ ծանրություն: Դրանով են դեկավարվում բահը շինելիս: Բահի կոթը այնքան յերկար պիտի լինի, վոր աշխատելիս բռնողի համար հարմար պիտի լինի, վոր աշխատելիս բռնողի համար հարմար պիտի լինի: Կոթի յերկարությունը կախված է աշխատողի

հասակից ու ձեռքերի յերկարությունից: Բահի ծանրությունը կոթի հետ միասին լինում է առհասարակ 5-7 գրվ.: Այսպիսի գործիքով մեծ մարդը հեշտությամբ է աշխատում: Աշխատելիս նրա գլխավոր ուժը գործադրվում է ոգտակար աշխատանքի վրա,— այսինքն՝ հողը բարձրացնելու և զպրտելու:


Այս ուղյուն գործիքը յերեխաների ձեռքին արդեն անպետք կըլինի, Նախ՝ բահը մեծ է նրա համար, յերկրորդ՝ բահի բարձրացրած հողի քաշը նրա ուժից վեր ե, յերբորդ՝ նրանց բահն ել յերեխայի համար ծանը եւ:

Յերեխան մեծի բահով թեկուզ կիսատպուտ աշխատելու համար, պետք վերցնի հողի կեսը կամ  $\frac{1}{4}$ -ը: Այդ դեպքում նա իր ջանքերի մեծ մասը պետք է գործադրվի իզուր տեղը՝ գործիքը—համարյա առանց հողի—դես ու դես շարժելու համար:

Ամենքի համար ել պարզ ե, վոր այսպես չպետք ե աշխատել, վոր ուժերի այսպիսի վասնումը և վլաստակար ե և անթույլատարելի: Սրանից պարզ ե, վոր մանկական աշխատանքի գործիքները պետք ե «մանկական» լինեն, բայց միևնույն ժամանակ իսկական գործիքներ: Նրանք պետք ե համապատասխանեն այն պահանջներին, վորոնք պետք են լուրջ աշխատանքի համար:

Մանկական բանվորական բահը պետք ե շինված լինի նույն նյութից, ինչ վոր մեծինը: Պետք ե այնպես շինվի, վոր նրանով կարելի լինի մեծի սովորական աշխատանքը կատարել: Միևնույն ժամանակ նա պետք ե ունենա իր սովորական ձեր, վորովհետեւ մարդիկ դարերով մշակել են այդ ձեր և հաշվել են, թե

այդ մեծության ու ձեփ բահը ինչ-քան հող կըպահի իր վրա և կհա-մապատասխանի աշխատողի ու-ժերին: Վորպեսզի բահը հարմար լինի 15, 16 տարեկանյերեխա-ների համար, պետք ե սովորա-կան նորմալ մեծությունից  $\frac{1}{6}$ -ով փոքր լինի: 13, 14 տարեկան յե-րեխաների համար բահը պետք ե լինի սովորականի  $\frac{2}{3}$ -ի չափ—իսկ 11, 12 տարեկանների համար կի-սի չափ: Վորպեսզի բահը հար-կավոր չափով 6 վերշոկ մտնի հո-ղի մեջ, բահի ներքին ծայրից 6 վերշոկ բարձր՝ կոթի վրա պետք ե անցկացնել թափմակ (նկ. № 1) Այ, այսպիսի բահը և մանկական կինի և միեվնույն ժամանակ լուրջ աօխատանքի համար պի-սենի:



Նկ. 1



Նկ. 2

Յեթե պիտք ե հողը 6 վերշոկից խոր փորել, որի-նակ փոս փորելիս, ծառ տնկելիս, առու հանելիս, կոթի վրա կարելի յե 2,3 այդպիսի թափմակ անցկացնել: Թափմակավոր բահով աշխատելիս յերեխան պետք ե նախ վոտքով սեղմի հենց բահը և շպրտի հողը: Յերկ-րորդ անգամ պետք սեղմի թափմակը—մինչև բահի թափմակը հասնի գետնին և ապա շպրտի հողը: Իսկ ավելի խոր փորելու համար պետք ե յերկրորդ հարվա-ծով սեղմի յերկրորդ թափմակը: Բահի վրա թափմակ-ներ շինելը այն առավելությունն ունի, վոր խոր փոս

փորելիս յերեխան ստիպված չի լինի մտնել փոսի մեջ—իսկ փոքր բահով փորելիս պետք ե մտնի:

Բայց այդ դեպքում բահի ձևը, նրա համապա-տասխան լայնությունն ու յերկարությունը պետք ե պահպանել, վորպեսզի հողը չթափվի: Այդ դեպքում հողի քանակը կհամապատասխանի աշխատողի ուժե-րին և մանկան աշխատանքն արդյունավետ կլինի: Միևնույն ժամանակ գործիքի քաշը կզակասի և աշ-խատանքի ոգտակարությունը կավելանա: Հասկանալի յե, վոր մանկական բահի կոթը պետք ե համապատաս-խանի յերեխայի հասակին, ինչպես այդ անում են սովորական բահի համար—մեծ աշխատողին հարմարեց-նելով:\*

Յերկրորդ գործիքը, վոր պետք ե հարմարացնել մանկական աշխատանքին, դա թորիս ե (МОՏЫГА): Սովորական թորիսը, վոր մի կտոր յերկաթ ե, յերե-խաների համար ծանր ե և անհրաժեշտ ե թեթևացնել այն: Չափի պարզապես փորբացնելը կիշեցնի նաև այդ աշխատանքի արտադրականությունը:

Այդ դեպքում մի հարվածը ավելի քիչ տարածու-թյուն կրոնի:

Դրանից խուսափելու համար պետք ե թորիսը փորբացնել նյութի հաշվին, այսինքն թորիս շինելու համար պետք ե գործազրել ավելի պինդ նյութ, ավե-լի բարակ թիթեղներից: Ավելի հեշտ ե ուղղակի թորիսի մեջտեղից վորոշ կտոր կտրել, հանել, կամ թորիսը շինել պողպատի կտորից, որինակ, հին սղոցից և  $\frac{3}{16}$  մատնաչափ ձողած յերկաթից (տես նկ. 3):

\* Քանի վոր մեր յերկիրը քարբարտ ե և հողը պինդ, մեղանում բահը շինվում ե սոտածալը և հասա, ոստի բաների համար բոլոր տածները պետք ե հարմարեցնել մեր պայմաններին:

Ծ. Թ.


Թորխի կոթի յերկարությունն ել բահի պես պետք ե համապատասխանի աշխատողի հասակին: Յեթե յերկաթե փոցիւը մեծերի համար շինվում ե 3/4 ու նույնիսկ մեկ արշին լայնության ու 12-16 ատամով, ապա վերը հիշած տարիքի յերեխաների համար պետք ե թեթև տիպի շինել:

15-16 տարեկանների համար  
14 ատամով, 13, 14 տարեկանների  
համար 12 ատամով, 11-12 տարեկանների համար 10 ատամով,  
9, 10 տարեկանների համար 8 ատամով: Փոցիւի կոթն ել կարելի յե փոխել, թեև սա այնքան եյական նշանակություն չունի, ինչպես բահի կամ թորխի համար:


Հող մշակելու մյուս գործիքները՝ ճանապարհ մաքելու քերիչը, դուրս տալու գողազոր թիակները, մարգերի յերեսը հարթելու մաքրիչները և այլն, քիչ գործնական են. լավ կլինի, վոր դրանք ել հարմարեցվեն մանկական աշխատանքին:

Պատղարակները, սայլակները, վորով հող կամ այլ ծանրություն են տեղափոխում, մանավանդ ջրելու ցնցուղները, պետք ե յերեխաների համար նույնպես փոքր չափսի շինել:

Պատղարակներով ու սայլակներով աշխատելու



Նկ. 3



Նկ. 4

մանավանդ շատ ոգտակար ե քաղհանելուց և ուրիշ կրացած աշխատանքներից հետո-իբրև բազմազանություն:

**Անպայման յերկու ձեռնով ցնցուղներով.** Ճուր կրելը նույնպես ոգտակար ե յերեխաների համար, դա թիակներին ուղիղ զերք ե տալիս և ուղղում ե ամբողջ մարմինը:

4-րդ նկարը ներկայացնում է յերեխայի կերպարանքը կողքից. առաջինը ցույց ե տալիս աշխատանքով ծանրաբեռնված ու ծոված զրությունը, իսկ յերկրորդը՝ ուղիղ աշխատող, առանց հոգնածության, հարմարեցրած գործիքներով և հերթով՝ մեկ կուցած մեկ ուղղված զերքով աշխատող յերեխայի մարմինը: 5-րդ նկարում յերեխաները պատկերացրած են հետեւից—առաջինը մի յերեխա յե, վոր տանում ե ծանր ցնցուղ մի ձեռքով, յերե մարմինը խիստ կուցել ե դեպի աջ կողմը, և աջ թիակը կախ ե ընկել, յերկրորդ պատկերը ներկայացնում ե յերեխայի մարմինը ուղիղ զրությամբ, վոր յերկու ձեռքով տանում ե փոքրիկ, իր ուժին համապատասխան հավասար աք շունչցող յերկու ցնցուղ:

Յեթե ջրով լի սովորական ցընցուղը քաշում է 36 զրկ., ապա 15-16 տարեկան պատանիների համար ամեն մի ցնցուղը պետք ե քաշի 11 զր. (2ը—22 զրկ.), 13, 14 տարեկանների ենամար՝ 8 զր. (2ը—16 զրկ.) 11, 12 տարեկանների համար 5 զրկ. (2ը—10 զրկ.) 10 տարեկանի համար՝ 4 զրկ.:




Նկ. 5

Քանի վոր ջրի հետ գործ ունենալ յերեխաները շատ են սիրում, մանավանդ փոքր հասակում, ապա կարելի յե թույլ տալ, վոր ջրեն և 10 տարեկանից փոքրերը ավելի փոքր ցնցուղներով, բայց վոչ իբրև պարտադիր աշխատանք:

Ջրով լի ցնցուղները տանելու ձանապարհը 300 քայլից ավելի չպիտի լինի:

Ցնցուղները հարմարեցնելիս կարիք չկա բոլոր մասերը հավասարապես փոքրացնել: Պետք ե նկատի առնել, վոր ցնցուղը վոչ թե միայն ջուր բերելու համար ե, այլև ջրելու: Սովորաբար, մանկական ցընցուղը միայն խաղալիք ե, վորով չի կարելի մարդկարը ջրելու աշխատանք կատարել. նա կարելի յե գործածել ծաղկամանների ծալիկները կամ արկղներում տնկած բույսերը ջրելու համար: Իսկական ցնցուղն այնպես պետք ե շինոված լինի, վոր ջրի շիթերը հասնեն գոնե մարդկերի կիսին: Դրա համար փոքրիկ ցընցուղները շինելիս պետք ե խողովակն այնքան միայն կարճացնել, վոր ցնցուղը պետք դա յերեխայի հասակի համապատասխան շինած մարդը ջրելու համար: (Տես 6-րդ նկար):

Զախ կողմը նկարած ե  $\frac{3}{4}$ ,  $\frac{1}{2}$  և  $\frac{1}{3}$  դույլ ջուր տանող ցնցուղներ- $\frac{1}{2}$  արշին լայնությամբ մարդկեր ջրելու համար: Աջ կողմը  $\frac{1}{3}$  և  $\frac{1}{4}$  դույլ ջուր տանող մանկական ցնցուղներ- կարճ խողովակներով մանկական մարդկերի համար:



նկ. 6

Կանոնավոր հարմարեցրած մանկական ցնցուղներով ջրելով, յերեխաներն ազատ կարող են ջուրը հասցնել մարդի կեսը առանց մարմնին վոր և ե անկանոն ու հոգնեցուցիչ դիրք տալու:

Դաշտային այնպիսի գործիքներ, ինչպես գերանդին, փայտե փոցխը, յեղանը պետք ե նույնապես փոքր ու թեթև լինին, համապատասխան նրանցով աշխատող յերեխաների ուժերին ու հասակին: Քանի վոր գերանդի քաշել թույլ ե տրվում միայն 14 տարեկանից, ապա յերեխաների գերանդին պետք ե շինել սովորական գերանդու մոտավորապես կես մեծության և կես քաշի չափ:

Փայտե փոցխով կարող են աշխատել ամեն տարեքի յերեխաներ: Միայն թե նրանցից թույլերի համար փոցխը պետք ե շինել ավելի թեթև և փոքր բերանով: Ինարկե, փոցխի ատամների յերկարությունը պետք ե սովորականի չափ լինի, վորովհետև դա այն հաշվով ե, վոր վորոշ բարձրությամբ սանրի: Մանկական յեղաններն ել պետք  $\frac{1}{3}$  ովլ կամ  $\frac{1}{2}$  ովլ փոքրացրած լինին, վորպեսզի վոգեվորված ժամանակ յերեխաները չափազանց ծանր բարդի չբարձրացնեն:

Այս գործիքները, վորոնցով մանուկները գործ են ունենալու փայտի հետ—կացին, սողոց և այլն, անպայման պետք ե հարմարեցնել մանկական ուժերին և մանկական ձեռքի չափերին: Այս գործիքների հարմարեցները ավելի հաճախ ե գործադրվում, քան հողի մշակման կամ հունձ հավաքելու գործիքներինը: Լավ հայրերը հաճախ գովելի հատկություն են ունենում իրենց զավակի համար փոքրիկ կացին, սողոց կամ խարաբուղ (ոռւրանկա) շինելու: Աշխատանքի համար

պետքական մանկական ատաղձագործական գործիք-  
ներ ծախու յել են պատահում:

5.

Այն ծառը, վոր անտառում կտրում են յերեխա-  
ները, կամ կոտրատում իբրև վառելափայտ, կամ վո-  
րից մի վորես բան են շինում, պետք ե լինի փափուկ  
տեսակի, վորպեսզի նյութը հեշտությամբ յենթարկվի  
մանկական թույլ ուժերին: Յերեխաներին չպետք ե  
հանձնարարել հաստ կաղնի սղոցել, վորի վրա յերե-  
խաները մի քանի որ պետք ե կորցնեն: Այդպիսի աշ-  
խատանքը նրանց շատ ե հոգնեցնում և նրանք կամ  
ակամա կանեն կամ կիսատ կթողնեն: Ընդհակառակը,  
փափուկ փայտը, որինակ՝ լորենին կամ կաղամախին  
յերեխաներին հնարավորություն ե տալիս բավական  
շուտով նկատելի արդյունքների հասնել և այս կինի  
գործը իր վախճանին հասցնել: Խոտհարքի ժամանակ  
յերեխաներին չպետք ե հանձնարարել հարել չափա-  
ղանց փայտացած ու խիտ խոտ, որինակ՝ քոլուտ կամ  
չոփուտ: Հող վորելիս յերեխաներին չպետք ե փորել  
տալ շատ ծանր, քարոտ կամ կոշտ գետին և այլն:  
Մանկական աշխատանքի տեղն ել պետք ե հարմա-  
րեցնել մանուկներին: Որինակ՝ չի կարելի յերեխա-  
ներին հանձնարարել, վոր ինամեն մեծերի մարգերի  
բույսերը Մանկական մարգերը այնպես պետք ե շին-  
դած լինեն, վոր յերեխաները մեջտեղի ձանապարհին  
չոգելով հեշտությամբ հասնեն մարգերի կիսին, առանց  
մարմինները շատ ծոելու: Սովորական  $\frac{1}{2}$  արշին լայ-  
նության մարգի վրա աշխատելիս յերեխաներն ստիպ-  
ված են լինում շատ անհարմար դիրք ընդունել, ձախ

ձեռքի վրա հենվելով, կախվում են մարգի վրա կամ  
մի վոտքը զնում են մարգում և բույսերը տրորում:  
Դա հոգնեցնում ե նրանց կամ թե իրենք են իրենց  
աշխատանքից դժգոհ մնում կամ մեծերն են հանդիմա-  
նում: Բացի զրանից անհարմար դիրքով աշխատելոց  
շուտով ձանձրանում են, այնպես վոր յերեխաները  
սառչում են աշխատանքից կամ փախչում կամ սկսում  
այնպիսի չարություններ անել, վոր ստիպված են լի-  
նում հեռացնել նրանց աշխատանքից: Դրանից խու-  
սափելու համար հարկավոր ե միայն այնպիսի լայ-  
նությամբ մարգեր շինել, վոր յերեխաները կարողա-  
նան նրանցում նույնչափ հարմար կերպով աշխատել  
ինչպես մեծերն իրենց մարգերում: Իմանալու համար  
թե մանկական մարգերը ինչ լայնության պետք ե  
շինել, բանջարանոցում աշխատող յերեխաներից մի-  
ջին հասակով յերկուսին ընտրել և կանգնեցնել  
զեմ առ զեմ: Հետո ձեռքները ամուր բռնած հետ-  
ետ տանել և պազեցնել: Յեկի ծնկից մինչև մյուսի  
ծունկը յեղած տարածությունը վորոշում ե նրանց  
մշակման յենթակա մարգի լայնությունը: (Տես նկ.7):  
Յեթե մարգը մի յերեխայի համար ե շինվում, ապա  
լայնությունը պետք ե վորոշել նույն կերպ, միայն թե  
յերեխան պետք ե մեծի հետ պազի, իսկ մարգի լայնու-  
թյան կեսը վորոշելու համար պետք ե վերցնել յերե-  
խայի ծնկից մինչև ձեռքի ծայրը:

Յեթե բանջարանոցում զանազան հասակի յերե-  
խաներ պետք ե աշխատեն, ապա մարգերը պետք ե  
շինել միջին լայնության: Նրանց վրա աշխատելու  
համար պետք ե յերեխաներին զույգերի բաժանել,  
սկսելով ամենատարբեր հասակ ունեցողներից և վեր-

ջացնելով միջին միկնույն հասակ ունեցողները: Յերեխաների կարճահասակությունը պետք է նկատի ունենալ և ուրիշ աշխատանքների ժամանակ, որինակ բույսերը կապելիս, տակառից ջուր հանելիս, պտուղ քաղելիս և այլն: Նրանց այդ աշխատանքը թեթևացնելու համար պետք է համապատասխան սիջոցներ ձեռք առնել, զորպեսզի յերեխաները ավելորդ ջանք չփրդաղբեն հասնելու իրենց համար անմատչելի իրին: Այդ միջոցները սովորաբար շատ հասարակ են.— սանդուխքին մի ավելորդ աստիճան շինել կամ մի այլ հարմարություն, և գժվարությունը կվերացվի: Յեթե յերեխաներն աշխատում են խիստ շող յեղանակին, պետք է նրանց հնարավորություն տալ ժամանակ առ ժամանակ անցնել ստվերի տակ կամ զովին աշխատել: Բանն այն ե, վոր իրենց կարճ հասակի պատճառով նրանք արեկց շիկացած հողից ավելի յեն տաքանում, և քամին նրանց ավելի քիչ ե զովացնում:

Յեթե յերեխաների աշխատանքը հարկավոր ձեռվ թեթևացրած և և նրա պայմանները համապատասխանում են մանուկների ունակություններին և ուժերին, ապա յերեխաների գործը հաջող և ուրախ կդնա:

Ուրախությունը մանկան աշխատանքի անհրաժեշտ պայմաննն ե: Ուրախ լինելը միայն յերեխաներին չե հատուկ: Ամեն մի կենդանի արարածի կայսքի սկզբում ժամանակի մեծ մասն անց և կացնում խաղաղով և ուրախությամբ: Վերը հիշված պայմանները հենց կարող են առաջ ուրախությունը մանկությունների վեցարությունը և անհաջողությունների վեցարությունը: Հիշելով իր մանկությունը նու կը բռնի, թե գորքան կարևոր է յերեխաներին այդ վշտից աշատել:

Հասկանություն համար, թե գորքան կարևոր է այն

ամենը, ինչ վոր հանձնարարում ենք մենք, պետք ե տեսնել յերեխաների բուռն ուրախությունը, յերբ նըրանց իրենց ուժերին հարմար և միկնույն ժամանակ լուրջ գործի համար պիտանի գործիքներ են տալիս, կամ այն ուրախությունը, յերբ յերեխաները աշխատելիս տեսնում են, վոր իրենց գործը հաջող և զնում, յերբ տեսնում են, վոր այդ գործը ողտակար և և զընահատվում և մեծերից, կամ յերբ բանջարանցում մեծերի մարգերի կողքին իրենց հարմար, նեղիկ մարգերն ունեն, կամ վերջապես այն հպարտությունը, յերբ ինքնուրույն կերպով, վորոշ հանձնարարությամբ մի շենք են շինում: Մեզնից ամեն մեկն իր մանկության ժամանակ ապրել և աշխատանքի այդպիսի հաջողությունների ուրախությունը և անհաջողությունների վեցարությունը իր մանկությունը նու կը բռնի, թե գորքան կարևոր է յերեխաներին այդ վշտից աշատել:

Յերեխաների աշխատանքը՝ պետք յեղած հիմունքների վրա զնելով—մենք հենց այդ աշխատանքը դաստիարակչական միջոց ենք գարձնում: Յերեխաների սրբում դեպի աշխատանքը սեր արթնացնելով, մենք հեշտացնում ենք նրա ապագա կյանքը: Իսկ յերեխայի աշխատանքը գյուղատնտեսության մեջ կանոնավոր հիմքի վրա զնելիս՝ թե յերեխայի մարմինն և ուղիղ աճում և թե նու սկսում և հենց աշխատանքը սիրել ու նրանով ուրախանալ: Համապատասխան իրենց աճման և ամբաղջման հետզետեւ ավելի ու ավելի զժժար ու պատասխանառ հանձնարարություններ ստանալով, յերեխաները չեն ջլատում իրենց ուժերը, աշխատելիս կամաց-կամաց ամրությում են, յուշ-

բացնում են գյուղատնտեսական աշխատանքի տեխ-  
նիկան և 17 տարեկան հասակում գյուղատնտեսական  
արտադրության մեջ դպրում են իրավագոր քաղա-  
քացիանութեատեր, վար կարող են ինքնուրույն կեր-  
պով վարել գործը և կարիք յեղած դեպքում միանալ  
ու հաղթահարել մի բանվորի ուժից վեր յեղող վորեն  
արգելքի:



ՀՀ Ազգային գրադարան



NL0926344

168

1925р.

1  
2443



ԳԻՎՆ Ե 15 ԿՈՊ.